Հավելված N 7
2021 թ.-ի « 02 » « 16 »
N ԴՏՊ-1160-11007/Մ-2 պայմանագիր

Ծրագրի եռամսյակային հաշվետվություն

Միջոցառման անվանումը՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում»
Համառոտ բովանդակությունը՝ Ծրագիրն ուղղված է Լոռու մարզի Ստեփանավան, Լոռի Բերդ և Գյուլագարակ խոշորացված համայնքների 60 հաշմանդամություն, առողջական կամ տարբեր խնդիրներ ունեցող, ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված ընտանիքների երեխաների ն և երիտասարդներին, ինչպես նաև որևէ խնդիր չունեցող երեխաներին և երիտասարդներին սոցիալ-հոգեբանական աջակցության ցերեկային կենտրոնում ցերեկային խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայություններ մատուցելուն:
Հաշվետու ժամանակաշրջանը - 01.02.2021 - 31.03.2021

	Իրականացված գործողություններ				
	Գործառույթների նկարագիր	**Ակնկալվող արդյունքները**	**Գնահատման չափանիշները և հիմնավորող փաստաթղթերը**	**Փաստացի մատուցած ծառայությունները**	**Մեկնաբանություն**
1	Բազմամասնագիտական թիմի կողմից ծրագրի շահառուների կարիքների և կարողությունների գնահատման կազմակերպում և դրա հիման վրա սոցիալ- վերականգնողական անհատական ծրագրի կազմում և մասնագետների պարապմունքների և ծառայությունների նախանշում	Անհատական ծրագրերի իրականացման արդյունքում կարողությունների և անկախ կյանքի հմտությունների աճ: Գնահատումն իրականացվում է ըստ ՖՄԴ գործիքակազմի	1. Սոցիալ վերականգնողական անհատկան ծրագրերի ձևաչափը /Հավելված 1/ 2. Մասնագետների մոդուլներ / կցվում է/ 3. Այցելությունների գրանցամատյանի ձևաչափը /հավելված 3/ 4. Լուսանկարներ /տեղադրված են հաշվետվության մեջ/ 5. Ցուցակը՝	Կարիքների գնահատում	Գործառույթներն իրականացվել են ինչպես կենտրոնի տարածքում, այնպես էլ կենտրոնի տարածքից դուրս, այդ թվում հեռավար
2	Համապատասխան մասնագետների կողմից խմբային և անհատական պարապմունքների միջոցով ծրագրի շահառուների մոտ ինքնասպասարկման, կենցաղավարման, հաղորդակցությունների հմտությունների զարգացում, նրանց	Ծառայությունների տրամադրում ցերեկային կենտրոնում		Ծառայությունների մատուցում՝ պայմանգրով սահմանված ծառայություններին և դրա ծավալին համապատասխան	Գործառույթներն իրականացվել են ինչպես կենտրոնի տարածքում, այնպես էլ կենտրոնի տարածքից դուրս, այդ թվում հեռավար

	կարողություններին համարժեք գիտելիքների տրամարում		համաձայն Աղյուսակ 1		
3	Ծրագրի շահառուների զբաղվածության ապահովում՝ կավագործության, բացիկների պատրաստման, մոմոագործության, արտթերապիայի, և այլ հմտությունների տրամադրման միջոցով	Ծառայությունների տրամադրում ցերեկային կենտրոնում՝ ծրագրի շահառուների ՝ընտանիքում ապրելու և համայնքում ներառվելու իրավունքի իրացման նպատակով, այդ թվում խմբային աշխատանքների իրացում			Գործառույթներն իրականացվել են ինչպես կենտրոնի տարածքում, այնպես էլ կենտրոնի տարածքից դուրս, այդ թվում հեռավար
4	Ազատ ժամանցի և մշակութային միջոցառումների կազմակերպում, իրականացում	Շահառուների մասնակցությամբ հանրային միջոցառման կազմակերպում՝ ուղղված շահառուների սոցիալական ներառմանը		«Արգինա» մշակութային ՀԿ-ի հետ համագործակ-ցության շրջանակ-ներում «Լիարժեք Կյանք» ՀԿ-ի թվով 3 շահառու մասնակցել է «Արգինա» մշակութային ՀԿ-ի կողմից իրականացվող կավագործության վարպետած դասընթացին: Կավից պատրաստված աշխատանքները՝ այդ թվում «Լիարժեք Կյանք» ՀԿ-ի շահառուների աշխատանքները ներկայացվել են Ստեփանավանի Ստեփան Շահումյանի անվան տուն-թանգարանում կազմակերպված ցուցահանդեցին:	«Լիարժեք Կյանք» ՀԿ-ի շահառուների ներգրավվածությու-նը կավագործության վարպետած դասընթացին և մասնակցությունը ցուցահանդեցին ուներ շահառուների սոցիալիզացիային և համայնքային կյանքին մասնկցությանը պաստելու նպատակ:

				Ցուցահանդեցին ներկա են եղել Լիարժեք Կյանք ՀԿ-ի թվով 23 շահառու:	
5	Խորհրդատվությունների տրամադ-րում և այլ ծառայություններ	Իրավական խորհրդատվությունների տրամադրում, թեժ գծի միջոցով անվճար ծառայության տրամադրում		1.Խորհրդատվության տրամադրում և ուղղորդումներ կենտրոն դիմած անձնաց թվով 5 շահառուի՝ պետական հավաստագիր և պետական հավաստագրով պարագաներ ձեռք բերելուն ուղղված ընթացակարգերի վերաբերյալ 2.Այլ հարցերով խորհրդատվություն և ուղղորդումներ և ծառայությունների մատուցում կենտրոն այցելած կամ զանգահարած թվով 9 անձի	Տրամադրված խորհդատվության և ուղղորդումների արդյունքում թվով 3 շահառու ստացել է պարագա ստանալու նպատակով պետական հավաստագիր 2. Ցերեկային կենտրոնում կազմակերպվող պարապմունքներին ընդգրկելու նպատակով թվով 4 երեխայի հերթագրում, որից 1 հոգին արդեն կենտրոնի շահառու է, Նյութական աջակցություն ստանալու նպատակով կենտրոն այցելած թվով 3 անձի գրանցում՝ հետագայում համապատասխան աջակցությունը տրամադրելու հնարավորության դեպքում աջակցություն տրամադրելու նպատակով,

					ՏԻՄ-ին և գործընկեր ՀԿ-ներին թվով 3 տեղեկատվության տրամադրում

Ընդամենը շահառուներ՝ 66 , որից 55%-ը հաշմանդամություն ունեցող և առողջական տարբեր խնդիրներ ունեցող անձիք են

Ազդեցությունը՝

1. Ներուժի բացահայտում, ինքնավստահության և ինքնագնահատականի բարձրացում
2. Ինքնուրույն կյանք վարելու՝ անկախ կյանքի հմտությունների ձեռքբերում
3. Շուրջօրյա խնամքի հաստատություններում հայտնվելու վտանգի նվազում

Հավելված 1

ԱՆՁԻ

ՍՈՑԻԱԼ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակման օրը	
Համարը N	

1. Ա.Ա.Հ
2. Ծնդյան օր, ամիս տարի
3. Անձնագրային տվյալներ
4. Սոցիալական կարգավիճակ
5. Ախտորոշում

1. Սոցիալ- հոգեբանական ծառայություններ

	Ծառայության / գործողության տեսակը	*Իրականացնող մասնագետը*	*Նշումներ (եթե առկա են)*

2. Կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված ծառայություններ

	Ծառայության / գործողության տեսակը	*Իրականացնող մասնագետը*	*Նշումներ (եթե առկա են)*

3. Անկախ կյանքի խթանմանն ուղղված այլ ծառայություններ

	Ծառայության / գործողության տեսակը	*Իրականացնող մասնագետը*	*Նշումներ (եթե առկա են)*

Հավելված 2

ՄՈԴՈՒԼ

Լիարժեք կյանք ՀԿ-ի կողմից իրականացվող « Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» ծրագրի շրջանակներում անկախ կյանքի հմտությունների տրամադրման **էրգոթերապևտիկ ծառայությունների**

Սույն մոդուլի շրջանակներում ծրագրի մասնակիցներին տրամադրվելու են՝

1. անկախ կյանքի հմտությունները ուսուցում
2. ճանաչողական ֆունկցիայի, շոշափելիքի, համի, հոտոտելիքի զգայարանների և դրանց արդյունավետ գործածման հմտությունների զարգացում
3. կենցաղավարման հմտություններ
4. ինքնասպասարկման հմտություններ
5. մանր և խոշոր մոտորիկայի զարգացում
6. էրգոթերապևտիկ այլ աշխատանքներ

Հ/Հ	**Զարգացման ոլորտ**	**Գործողություն/պարապմունք**	**Պարապմունքների քանակ**	**ժամաքանակ**	**Կարիքներ և հավելյալ մեկնաբանություն**
1	Ծանոթության հաստատում ծրագրի մասնակցի հետ: Անձնային դիտարկում: Կարիքի գնահատում հիմնված այցելուակենտրոն մոտեցման վրա:	• Տեսական մաս, զրույց-քննարկում. ծրագրի մասնակցի, հիմնախնդիրների վեր հանում,հարց ու պատասխան հիմնված անձի ցանկությունների, նախասիրությունների, կարիքի, կարողությունների վրա:	1	1 ժամ	Աշխատանքները կատարվում են շենքի ներսում:
2	Ծրագրի մասնակցի կարողությունների և հմտությունների ֆունկցիոնալության գնահատում:	• Խոշոր մոտորիկա • Մանր մոտորիկա • Տարածական կողմնորոշման հմտություններ • Տեղեկացվածություն շրջապատի վերաբերյալ • Առօրյա կենցաղավարության հմտություններ • Զգայական ոլորտի հմտություններ • Ճանաչողական հմտություններ • Սոցիալական և հուզական ճանաչողություն • Խոսքի հմտություններ	2	1ժամ	

3	Զգայական ոլորտի հմտությունների գնահատում և զարգացում	• Աշխատանքներ երկրաչափական պատկերներով, հուլունքներով, թելերով, կոճակներով, ընդեղենով և այլ մանր առարկաներով • Շոշափելիքը զարգացնող վարժություններ օր.՝ առարկաների ձևի, չափսի, պատրաստված նյութի որոշմանվերաբերյալ վարժություններ և/կամ որևէ իրի, առարկայի նյութակազմվածքը (տեքստուրան) շոշափելը և շոշափելով զգալը, • Մարմնի դիրքը տարածության մեջ (նստած,կանգնած, ուղղահայաց, հորիզոնական) զգալուն ուղղված վարժություններ,	8	1 ժամ	Հարցաթերթերի պատրաստում և հարցման անցկացում: Վարժությունների իրականացում:
4	Մանր մոտորիկայի զարգացում	• առարկաները գործածելուն առնչվող համակարգված գործողություններ կատարելը, • առարկաները վերցնելը, գործածելը և բաց թողնելը ձեռքի, մատների կամ մեծ մատի օգնությամբ, ինչպես օրինակ՝ սեղանից մետաղադրամներ վերցնելը կամ բռնակը պտտելը: • Մատնային մարմնամարզություն • Աշխատանք մատներով • Խաղեր կապիչներով և կոճակներով • Աշխատանք գործվածքներով,թելով, տարբեր տեսակի հյուսվածքներով • Մակետների,երկրաչափական պատկերնների, շենքերի, շինությունների ճանաչում/պատկերացում շոշափելիքի զգայության միջոցով • Ձեռքի ինքնամերսում • Մոզաիկայով խաղեր • Կառուցողական խաղեր	2	1 ժամ	Տարբեր նյութերից պատրաստված առարկաներ: Լսողական ընկալման զարգացումը անկախ կենցաղավարման և տարածական կողմնորոշման կարևորագույն բաղադրիչներից է: Այս պարապմունքների ժամանակ
5	Ճանաչողական հմտությունների զարգացում	• Գույների տարբերակում, նմանեցում, ճանաչում • Մրգերի,բանջարեղենի ճանաչում իրարից տարբերակում • Թվերի,դրամի ճանաչում տարբերակում	2	40 րոպե	

		և օգտագործում			
6	Ինքնասպասարկման հմտությունների զարգացում	• Լվացվել լոգանք ընդունել՝ սեփական մարմինն ամբողջությամբ կամ մարմնի որոշ մասերը լվանալը և չորացնելը • Հագնվելը՝ հագուստը և կոշիկները հագնելու և հանելու հետ կապված համակարգված գործողություններն ու առաջադրանքները հերթականությամբ կատարելը, կլիմայական ու սոցիալական պայմաններին հետևելը, ինչպես օրինակ՝ շապիկներ, կիսաշրջազգեստներ, բլուզներ, վարտիքներ, ներքնազգեստ, զուգագուլպաներ, գլխարկներ, ձեռնոցներ, վերարկուներ, կոշիկներ և գուլպաներ, երկարաճիտ կոշիկներ, հողաթափեր և տնային մաշիկներ հագնելը, հարմարեցնելը և հանելը: • Ուտել՝ Ուտելու պահանջ զգալը և մատուցված սննդամթերքը ուտելուն ուղղված համակարգված առաջադրանքներ և գործողություններ կատարելը, այն բերանին մոտեցնելը,տվյալմշակույթում ընդունված եղանակով ուտելը, սննդամթերքը մասերի բաժանելը կամ կտրելը, շշեր և թիթեղամաններ բացելը, սեղանի սպասք օգտագործելը, արագ սնվելը, ճաշկերույթի կամ ճաշի մասնակցելը: • Խմելը Խմելու կարիք զգալը և ըմպելիքով տարան վերցնելը, այն բերանին մոտեցնելը և ըմպելիքը տվյալ մշակույթում ընդունված եղանակով խմելը, խմելու համար նախատեսված հեղուկներ խառնելը, ժամանակ առ ժամանակ խառնելը և լցնելը,շշեր և թիթեղամաններ բացելը, ձողիկով խմելը կամ հոսող ջուր խմելը՝ ծորակից կամ աղբյուրից :	18	30 րոպե	Պարապմունների քանակը և տևողությունը կարեղ են փոխվել՝ ըստ ծրագրի մասնակցի կարողությունների և գնահատման ընթացքում ծառայությունների ծավալի որոշման:
7	Կենցաղավարման հմտությունների զարգացում	• Տնային գործեր անելը՝ տանը մաքրություն անելը, հագուստներ լվանալը և չորացնելը, սպասքը մաքրելը, կենցաղային	15	30 րոպե	Պարապմունների քանակը և տևողությունը կարեղ

		տեխնիկա օգտագործելը, աղբը թափելը, նչպես օրինակ՝ խոհանոցի սեղանները սրբելը, կենցաղայինաղբը հավաքելը և թափելը, սենյակները, պատի պահարանները և դարակները կարգի բերելը, կոշիկները մաքրելը, փոշեկուլներ և խոզանակներ օգտագործելը: • Կերակուր պատրաստելը՝ սեփական անձի կամ այլ անձանց համար պարզ կամ բարդ կերակուրներիպատրաստումը ծրագրելը, կազմակերպելը, դրանք պատրաստելը և մատուցելը,ինչպես օրինակ՝ ուտելու համար պիտանի սննդամթերքն ուտելիք ընտրելը, ուտեստպատրաստելու համար բաղադրամասերն իրարմիացնելը, էլեկտրաէներգիայի միջոցով կերակուր, սառը ուտեստև ըմպելիք պատրաստելը, ինչպեսնաև սննդամթերքը մատուցելը: • Պարզ կերակուր պատրաստել օր.՝քիչ բաղադրամասր ունեցող, պատրաստման և մատուցման պարզ եղանակներ պահանջող կերակուրների պատրաստումը կազմակերպելը,դրանք եփելը և մատուցելը,ինչպես օրինակ.՝ թեթև ուտեստ կամ կերակուր պատրաստելը դրանց պարզ գործողություններ կատարելը կտրելու,տրորելու,կեղևահանելու,եփելու և տաքացնելու միջոցով: • Բաղադրյալ կերակուր պատրաստել՝ շատ բաղադրամասեր ունեցող պատրաստման և մատուցման բարդ եղանակներ պահանջող կերակուրների պատրաստումը ծրագրելը, կազմակերպելը,դրանք եփելը և մատուցելը համապատասխան գործողություններ կատարելով՝սննդամթերքի բաղադրամասեր ձևափոխել,կեղևահանել,բարակ շերտերով կտրտել,խմորել:			են փոխվել՝ ըստ ծրագրի մասնակցի կարողությունների և գնահատման ընթացքում ծառայությունների ծավալի որոշման:
8	Խոհանոցային անվտանգ	• Սուր,կտրող, ծակող գործիքներից	10	40 րոպե	

	գործունեության կանոնների ուսուցանում	(դանակ/մկրատ/քերիչ) անվտանգ օգտվելու կանոններ: • Հատուկ վարժություններ՝ ուղղված մթերքը լվանալու, անվտանգ՝ կեղևազրկելու,կտրատելու,տապակելու,եփելու հետ կապված: • Հստակ անվտանգության կանոնների կիրառում՝զազօջախից,միկրոալիքային վառարանից անվտանգ օգտվելու համար խուսափելով այրվածքներից և այլ վնասվածքներից: • Ռետինե ձեռնոցների կիրառում խոհանոցային տաք պարագաներ (թավա,սրճեփ) անվտանգ օգտագործելիս: • Մարմնի մասերը որպես կողմնորոշիչ օգտագործելու հմտությունների կիրառում: • Էլեկտրական թեյնիկից,սրճեփից օգտվելու անվտանգ կանոններ ձայնային կողմնորոշիչներով պայմանավորված:			

ՄՈԴՈՒԼ

Լիարժեք կյանք ՀԿ-ի կողմից իրականացվող « Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» ծրագրի շրջանակներում անկախ կյանքի հմտությունների տրամադրման **արտթերապիայի ծառայությունների**

Տեսակ	**Նպատակը**	**Մեթոդ**
Նկարչաթերապիա	• Անհատական առանձնահատկությունների բացահայտում, • Հույզերի արտահայտում • Միջանձնային փոխհարաբերությունների բացահայտում: • Հնարավորություն է տալիս բացահայտել ներընտանեկան կոնֆլիկտները, կարգավորել երեխայի հաղորդակցման և հուզական ոլորտի խնդիրները:	• խմբային աշխատանք, • զրույց քննարկում
Կավագործություն	• Աշխատասիրության ձևավորում և աշխատանքի արդյունքի տեսանելի և շոշափելի դարձնելու հնարավորություն, • Կենցաղային առարկաների ստեղծում • Երեխայի ստեղծագործական ընդունակությունների բացահայտում և զարգացում:	• անհատական աշխատանք
Կավագործություն	• մանր մոտորիկայի զարգացում, • աշխատասիրության ձևավորում և աշխատանքի արդյունքի տեսանելի և շոշափելի դարձնելու հնարավորություն, • կենցաղային առարկաների ստեղծում • Երեխայի ստեղծագործական ընդունակությունների բացահայտում և զարգացում:	• անհատական աշխատանք
Տիկնիկագործություն	• ինքնագնահատականի բարձրացում, • ինքն իրեն կողքից տեսնելու հնարավորություն	• խմբային վերլուծություն
Ապլիկացիաների և օրիգամիների պատրաստում	• Նպաստում է երեխայի մանր և խոշոր մոտորիկայի զարգացմանը: • Նպաստում է խմբում երեխաների ակտիվ համագործակցությանը, դրական միջանձնային հարաբերությունների հաստատմանը, փոխօգնությանը, երեխաների ստեղծագործական հմտությունների բացահայտմանը և զարգացմանը, ինքնուրույնության դրսևորմանը:	• Խմբային աշխատանք: (4-5 խմբերով):
Դիզայն	• թափոնների վերամշակման հմտությունների ձևավորում	• խմբային աշխատանք
Օճառի պատրաստում	• նպաստում է մատների շարժունակության զարգացմանը, թուլացնում է նյարդային լարվածությունը:	• անհատական և խմբային աշխատանք
Փայտամշակում	• ձիրքերի բացահայտում, • աշխատասիրության ձևավորում	• խմբային աշխատանք

Հեքիաթաթերապիա	• սեփական խնդրի բացահայտում, • բարու և չարի տարբերակման կարողության զարգացում, • հոգեվիճակների կորրեկցիա	• վերլուծական աշխատանք, • ինտերակտիվ խմբային քննարկում
Կոլլաժ	• հոգեվիճակի ախտորոշում և վերլուծություն, • սեփական զգացմունքներն ու ցանկությունները հասկանալու կարողություն	• խմբային աշխատանք
Ազատ ստեղծագործություն	• անձի հոգեվիճակը բացահայտող հետաքրքիր պատկերների ստեղծում, • խմբով աշխատելու և միմյանց կարծիքը լսելու ունակության զարգացում, • մանր մոտորիկայի զարգացում	• խմբային աշխատանք
Պլաստիլինաթերապիա	• անձի ներդաշնակեցում՝ ինքնարտահայտման և ինքնաճանաչման կարողության զարգացման միջոցով	• խմբային աշխատանք

ՄՈԴՈՒԼ

Լիարժեք կյանք ՀԿ-ի կողմից իրականացվող «Տեսողության խնդիրներ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական վերականգնում» ծրագր շրջանակներում **համակարգչային հմտությունների տրամադրման ծառայությունների**

I. **Նպատակը՝ ծրագրի մասնակցին** տրամադրել համակարգչի հետ աշխատելու առաջնային գիտելիքներ:

II. Տրվող հիմնական հմտությունները՝

1. Ծանոթություն օպերացիոն համակարգերի,համակարգչի և ստեղնաշարի ուսուցում՝6 դասաժամ
2. Մենյուների և առաջնային ծրագրերի ուսուցում՝ 7 դասաժամ,
3. Համացանց (սոցկայքեր, իրավատեղեկատվական) և թվային կապի միջոցների ուսուցում՝ 7 դասաժամ:

III. Դասընթացների ընթացքում ներառված նյութեր, հմտություններև ուսուցում.

1. Համակարգչի և օպերացիոն համակարգերի ծանոթություն
2. Ստեղնաշարի ծանոթացում
3. Ֆայլ, ֆայլի ձևերը
4. Microsoft word թղթապանակ և տեքստի նավարկություն
5. Microsoft word տեքստի ձևավորում
6. Microsoft word աղյուսակների կառուցում և նավարկում
7. Microsoft excel էլեկտրոնայինաղյուսակներ և ֆորմուլաների կառուցվածք
8. Mozilla, Google
9. Youtube
10. Էլեկտրոնային փոստ
11. Սոցիալական ցանցեր, Ֆեսբուք
12. Տեղեկատվական և հայտարարությունների կայքեր
13. Իրավական կայքեր
14. Սկայպ

IV. Մոդուլի կատարողական, արդյունքային ցուցանիշներ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների ***բավարար մակարդակի ապահովումն է:***

Այս մոդուլի իրականացումից հետո ծրագրի շահառուն պետք է.

1. Գիտակցի համակարգչի կարևորության և նրա անփոխարինելի դերը մարդու անկախ կյանք վարելու համար,
2. Ծանոթանա համակարգչի մասերին, իմանա ներմուծող և արտածող սարքերի, ինչպես նաև հիշող սարքերի մասին,
3. Կարողանա տեքստային փաստաթղթեր ներմուծի,
4. Microsoft Word-ի միջոցով խմբագրի աղյուսակներ,
5. Կարողանա օգտվել համացանցից՝ գտնել հետաքրքրող տեղեկատվությունը, աուդիո և էլեկտրոնային գրականության հասանելիությունը, տեղադրել և ընթերցել հայտարարություններ, ինչպես նաև օգտվել պետական թվայնացված ծառայություններից:

ՄՈԴՈՒԼ

Լիարժեք կյանք ՀԿ-ի կողմից իրականացվող « *«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում»* ծրագրի շրջանակներում ֆիզիոթերապևտիկ ծառայությունների տրամադրման

Սույն մոդուլի շրջանակներում ծրագրի մասնակիցներին տրամադրվելու են՝

1. Ամենօրյա ակտիվությունների մեջ հանրավորինս անկախացում
2. Թոքերի ծավալի մեծացում
3. Հենումների ակտիվացում
4. Բալանսի զարգացում
5. Քայլքի բարելավում

Հ/Հ	Զարգացման ոլորտ	Գործողություն/պարապմունք	Պարապմունքների քանակ	ժամաքանակ	Կարիքներ և հավելյալ մեկնաբանություն
1	Ծանոթության հաստատում ծրագրի մասնակցի հետ: Անձնային դիտարկում: Կարիքի գնահատում հիմնված այցելուակենտրոն մոտեցման վրա:	• Տեսական մաս, զրույց-քննարկում. ծրագրի մասնակցի, հիմնախնդիրների վեր հանում,հարց ու պատասխան հիմնված անձի ցանկությունների,նախասիրությունների,կարիքի,կարողությունների վրա:	1	1ժամ	Աշխատանքները կատարվում են շենքի ներսում:
2	Ծրագրի մասնակցի կարողությունների և հմտությունների ֆունկցիոնալության գնահատում:	• Շնչառական վարժություն • Գլորումների ուսուցանում • Աշխատանք հենումների վրա • Նստած բալանսի զարգացում • Չորեքթաթ դիրքի ուսուցանում • Կորդինացիայի զարգացում • Քայլքի նախապատրաստում • Ճիշտ քայլք • Անկողնում մոբիլիզացիա • Խնամակալին վարժությունների ուսուցանում	2	1ժամ	
3	Ֆիզիկական ոլորտի զարգացում և գնահատում	• Աշխատանքները կատարվում է հայելու դիմաց(ճանաչողական) և հիմնաստիկ գնդակի օգնությամբ, • Նստած դիրքում կատարվում է	Ըստ անհրաժեշտության	1ժամ	

		աշխատանք հենումերի վրա (հենվում է իմ ձեռքի վրա ֆիքսում եմ ձեռքը) • Աշխատանք անկողնում մոբիլիզացիայի վրա որը կատարվում է խախալիքների օգնությամբ • Մկանների ուժեղացում և ձգում ստորին ու վերին վերջույթների			
4	Նստած բալանսի զարգացում	• Փորի մկանների ուժեղացում • Նստած դիրքում մեջքը ուղիղ լորդոզ ու կիֆոզ պահպանած կատարվում է ստատիկ մեջքի մկանների զարգացում • Որից հետո խրախուսելով փորձում ենք պահել նստաց բալանս որը միջինում տևում է 5-7վրկ . • փորի պառկած դիրքով նույնպես կատարվում է մեջքի մկանների ուժեղացում որից հետո կրկին զարգացնում ենք նստած բալանսը	Ըստ անհրաժեշտության	1ժամ	
5	Չորեքթաթ դիրքի ուսուցանում	• Չորեքթաթ դիքի համար աշխատում ենք օվալաձև գնդակով կամ գլանով, • Սովորում ենք այդ դիրքով կատարել քայլք • Չորեքթաթ դիրքի ուսուցանումից հետո անցնում ենք քայլքի նաղապատրաստական փուլի	Ըստ անհրաժեշտության	40րոպե	
6	Քայլքի նախապատրաստում	• Մկանների ուժեղացում • Հայելու դիմաց կատարում ենք կիսաածնկած բալանսի լավացում • Որից հետո աշխատում ենք կանգնելու վրա • Կանգնած բալանսի լավացում • Օգնող միջոցներից օգտվելու կարողություն	Ըստ անհրաժեշտության	30 րոպե	Պարապմունների քանակը և տևողությունը կարեղ են փոխվել՝ ըստ ծրագրի մասնակցի կարողությունների և գնահատման ընթացքում ծառայությունների ծավալի որոշման։
7	Ճիշտ քայլք	• Քաշի կրում • Քայլքի ժամանակ միջին գծի պահպանում	Ըստ անհրաժեշտության	30 րոպե	Պարապմունների քանակը և

		• Քայլք դրսում.			տևողությունը կարող են փոխվել՝ ըստ ծրագրի մասնակցի կարողությունների և գնահատման ընթացքում ծառայությունների ծավալի որոշման:
8	Խնամակալի ուսուցանում	• Ուսուցանման նպատակը հետևյալն է • Աշխատանքի արդյունավետություն • Ճիշտ խնամք • Երեխայի պահպանողական վիճակ • Վերջում խնամակալը կատարում է բոլոր վարժությունները մասնագետի վերահսկողության տակ	Ըստ անհրաժեշտության	40 րոպե	
9	Շնչառական վարժություններ	Շնչառական վարժության համար օգտագործում ենք օվալաձև գնդակ • Մեջքի պառկած դիրում ենք կատարում վարժություններ • Աշխատում ենք նաև տարբեր խախալիքներով	Ամեն պարապմունքի ժամանակ		

ՄՈԴՈՒԼ

Լիարժեք կյանք ՀԿ-ի կողմից իրականացվող « Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում» ծրագրի շրջանակներում անկախ կյանքի հմտությունների տրամադրման **հոգեբանական ծառայությունների**

Սույն մոդուլի շրջանակներում ծրագրի մասնակիցներիը մասնակցելու են անհատական և խմբային պարապմունքների՝ ստորև նշված նպատակներին հասնելու համար.

Հ/Հ	Հոգեբանական աջակցման տեսակը	Հոգեբանական աշխատանքի նպատակը	Այցելությունների և խմբային աշխատանքների հաճախականությունը	Աշխատանքի տևողությունը
1	խմբային	Անկախ կյանքի կարևորության, անկախ ապրելու, կենցաղավարելու հմտություններ ստանալուն անձին նախապատրաստելը	շաբաթը 2 օր	2 ժամ
2	անհատական	Ներանձնային խնդիրների հաղթահարում՝ աշխատանք վախերի, բարդույթների հետ, էմոցիոնալ լարվածության իջեցում	շաբաթը 1 օր	1 ժամ
3	անհատական	Ադեկվատ ինքնագնահատականի ձևավորում և ինքնավստահության ձեռքբերում:	շաբաթը 1 օր	1 ժամ
4	անհատական	Կամային հատկանիշների ուժեղացում	շաբաթը 1 օր	1 ժամ
5	անհատական	Անձի ուժեղ կողմերի վերհանում, դրանց վրա հիմնվելով ապագայի պլանավորում	շաբաթը 1 օր	1 ժամ
6	խմբային	Աշխատանք ուղղված միջանձնային փոխհարաբերությունների լավացմանը՝ ընտանիքում,ընկերական շրջապատում	շաբաթը 1 օր	2 ժամ
7	խմբային	Նոր միջավայրում շփման հմտությունների և կարողությունների ձևավորում	շաբաթը 1 օր	2 ժամ
8	խմբային	Ներանձնային կոնֆլիկտների հաղթահարում	շաբաթը 1 օր	2 ժամ

ՄՈԴՈՒԼ

Լիարժեք կյանք ՀԿ-ի կողմից իրականացվող « *«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական աջակցություն ցերեկային կենտրոնում»* ծրագրի շրջանակներում **լոգոթերապևտիկ ծառայությունների** տրամադրման

Հ/Հ	Ոլորտ	Գործողություններ	Տեսակը
	Ծանոթության հաստատում ծրագրի մասնակցի հետ: Անձնային դիտարկում: Կարիքի գնահատում հիմնված այցելուակենտրոն մոտեցման վրա:	Տեսական մաս, զրույց-քննարկում. ծրագրի մասնակցի, հիմնախնդիրների վեր հանում, հարց ու պատասխան հիմնված անձի ցանկությունների,նախասիրությունների,կարիքի,կարողությունների վրա:	Անհատական
1	Պասիվ բառապաշար	1. Խաղեր, վարժանքներ, 2. Հրահանգներ+ գործողություններ, 3. Հեքիաթների ընթերցում, 4. Սյուժետադերային խաղեր	Անհատական
2	Ակտիվ բառապաշար	1. Ակտիվ խաղեր, շարժախաղեր, 2. Փեռքի աշխատանքներ/ նկարչություն, ավազ, կավագործություն, նկարչություն, ծեփ/ 3. Խաղեր, խաղալիքների, երևույթների, առարկաների ուսումնասիրում	Անհատական
3	Հնչարտաբերում	1. Շնչառական վարժություններ, 2. Արտաբերական վարժություններ, 3. Մեխանիկական միջամտություն, 4. Հնչարտաբերման նմանակում	Անհատական
4	Ձայն/ ձայնաձևավորում	1. Մերսումներ, 2. Շնչառական վարժություններ, 3. Ձայնային վարժություններ, 4. Ձայնաձևավորման տեխնիկաներ	Անհատական
5	Խոսքի տեմպ, ռիթմ	1. Շնչառական վարժություններ, 2. Խոսքային շնչառության տրողության զարգացում, 3. Գործողություն+ խոսք, 4. Հաշիվ+ խոսք	Անհատական
6	Կապակցված խոսք	1. Բառապաշարի ընդլայում, 2. Քերականական կառույցների ձևավորում, զարգացում, 3. Առօրյա խոսքի զարգացում	Անհատական

7	Ոչ վերբալ հաղորդակցում	1. Ուշադրության կենտրոնացում, պահպանում, 2. Հիշողության ակտիվացում, 3. Ընդօրինակմնան կարողության զարգացում, 4. Նկարներով հաղորդակցում, 5. Ժեստերով, դիմախաղով հաղորդակցում	Անհատական
8	Խոսքային հաղորդակցում	1. Բառապաշարի զարգացում, 2. Քերականական կառույցների զարգգացում, 3. Կապակցված խոսքի կատարելագործում, 4. Ցանկությունները և պահանջմունքները արտահայտելու կարողության զարգացում, 5. Զրուցելու կարողության զարգացում	Անհատական

Հավելված 3

Այցելությունների էլեկտրոնային գրանցամատյան /ամսական/				
2021 թ .				
	Ծառայություն ստացողի ԱԱՀ	Ծառայությյան տեսակ և փաստացի տրամադրման օրը		
		Ծառայություն 1	Ծառայություն 2	Ծառայություն 3
1		օրեր	օրեր	օրեր
2		օրեր	օրեր	օրեր
3		օրեր	օրեր	օրեր
4		օրեր	օրեր	օրեր
5		օրեր	օրեր	օրեր
6		օրեր	օրեր	օրեր
7		օրեր	օրեր	օրեր
8		օրեր	օրեր	օրեր
9		օրեր	օրեր	օրեր
10		օրեր	օրեր	օրեր
Մասնագետ(ներ)ի ստորագրությունը՝ ըստ ծառայության		Ստորագրություն	Ստորագրություն	Ստորագրություն

Լուսանկարներ՝